ՔՐԻՍՏԻՆԱ ԱՆԱՆՅԱՆ
ՀՊՏՀ կառավարման ամբիոնի ասպիրանտ

ՈՉ ՖՈՐՄԱԼ ԶԲԱՂՎԱԾՈՒԹՅՈՒՆԸ ՀՀ-ՈՒՄ. ՄԻՏՈՒՄՆԵՐԸ ԵՎ ՊԱՏՃԱՌՆԵՐԸ

Ցանկացած երկրի տնտեսությունում ոչ ֆորմալ զբաղվածության վերլուծությունը կարևորագույն հիմնախնդիրներից մեկն է՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ դա չդիտարկվող տնտեսության հիմնական բնութագրիչներից է: Ավելին՝ ոչ ֆորմալ զբաղվածները, ի տարբերություն ֆորմալ զբաղվածների, միշտ ավելի խոցելի են, քանի որ իրենց համար հասանելի չեն սոցիալական տարբեր երաշխիքներ՝ կապված առողջության և անվտանգ աշխատանքային պայմանների ապահովման, սոցիալական նպաստների ստացման, չնախատեսված իրադարձություններից պաշտպանված լինելու և այլնի հետ: Հետևաբար՝ ոչ ֆորմալ զբաղվածությանը վերաբերող ցանկացած գիտական եզրահանգում կարող է օգտագործվել զբաղվածության բնագավառում այնպիսի քաղաքականության մշակման համար, որը կնպաստի երկրի սոցիալ-տնտեսական զարգացմանը:

Հիմնաբառեր. *բնակչության զբաղվածություն, ոչ ֆորմալ զբաղվածություն, ոչ ֆորմալ զբաղվածության մակարդակ, տնտեսության չդիտարկվող հատված*

JEL: B22, J21, O17

Բնակչության զբաղվածությունը շուկայական տնտեսության ներկա պայմաններում սոցիալ-տնտեսական ամենակարևոր և արդիական հիմնախնդիրներից մեկն է: Դա երկրի տնտեսական զարգացման կարևորագույն մակրոտնտեսական ցուցանիշներից է: Նշված հիմնախնդիրը երկրի տնտեսության զարգացման առանցքային նախադրյալներից մեկն է: Զբաղվածության մակարդակի բարձրացումն ապահովում է տնտեսական աճ, կանխում գործազրկության և մարդկանց անգործության՝ հասարակական չարիքի վերաճման վտանգը:

Բնակչության զբաղվածությունը բազմանշանակ հասկացություն է, որն ընդգրկում է մարդկային գործունեության բոլոր կողմերը: Զբաղվածությունն արտադրության, առևտրի, ծառայությունների և այլ բնագավառներում մարդկանց աշխատանքային օգտակար գործունեությունն է, որի արդյունքում նրանք ստանում են աշխատանքային եկամուտ՝ աշխատավարձ՝ ապահովելով անձնական պահանջմունքների բավարարումը: Զբաղվածությունը մարդկանց տնտեսական ակտիվության ցուցիչն է:

Բնակչության զբաղվածության յուրահատուկ ձև է ոչ ֆորմալ զբաղվածությունը, որը մեր ուսումնասիրության առարկան է: Ոչ ֆորմալ զբաղվածությունը սահմանվում է որպես ֆորմալ, ոչ ֆորմալ կազմակերպությունների կամ տնային տնտեսությունների ոչ ֆորմալ աշխատատեղերի հանրագումար: Ոչ ֆորմալ զբաղվածությունը նախևառաջ ներառում է վարձու այն աշխատողներին, ովքեր գործատուի հետ ունեն աշխատանք կատարելու բանավոր համաձայնություն, այդ թվում՝ տնային տնտեսությունում աշխատողին, այգեպանին, դայակներին, սպասուհիներին, վարորդներին, պահակներին և այլն: Բացի վերոնշյալներից, ոչ ֆորմալ զբաղվածների թվին են դասվում չգրանցված կազմակերպությունների սեփականատեր-գործատուները և դրանցում չգրանցված աշխատողները, արտադրական կոոպերատիվների անդամները, ինչպես նաև բացառապես սեփական վերջնական սպառման համար ապրանք արտադրող կամ ծառայություն մատուցող ինքնազբաղվածները (օրինակ՝ սեփական կարիքների համար կոշիկ վերանորոգողները, հագուստ կարողները, սեփական կացարան կառուցողները և այլն): Ոչ ֆորմալ զբաղվածներ են համարվում նաև տնային տնտեսություններում բացառապես սեփական վերջնական սպառման համար ապրանք արտադրող և առանց վարձատրության աշխատող ընտանիքի անդամները (եթե նրանց կողմից արտադրված արտադրանքը նշանակալի մասնաբաժին է ունեցել տնային տնտեսության ընդհանուր սպառման մեջ)[1].

Խոսելով ոչ ֆորմալ զբաղվածության մասին՝ անհրաժեշտ է ներկայացնել վերջինիս առաջացման հիմնական պատճառները՝ գործազրկության բարձր մակարդակ, էժան աշխատուժի առկայություն և դրա շահագործման հնարավորություն, աշխատանքի տեղավորման պաշտոնական գրանցման ոչ նպատակահարմարություն, գործատուի՝ պետական վճարներից (հարկեր, սոցիալական ապահովության վճարներ և այլն) խուսափելու, փախստական լինելու կամ հանցավոր անցյալ ունենալու փաստերի քողարկման ցանկություն և այլն:

Ոչ ֆորմալ զբաղվածությունը բնութագրող հիմնական ցուցանիշներից մեկը **ոչ ֆորմալ զբաղվածության մակարդակն է**, որը ոչ ֆորմալ զբաղվածություն ունեցողների թվի տեսակարար կշիռն է ընդհանուր զբաղվածության մեջ, այլ կերպ ասած՝ դա ոչ ֆորմալ աշխատատեղերի և ընդհանուր աշխատատեղերի տոկոսային հարաբերակցությունն է:

Ոչ ֆորմալ զբաղվածության մակարդակի ուսումնասիրությունը նպատակահարմար է իրականացնել երկու խոշոր խմբավորումներով՝ ըստ գյուղատնտեսական և ոչ գյուղատնտեսական գործունեության տեսակների, այդ թվում՝ սեռային բաշխվածությամբ:

---

[1] Տե՛ս http://www.armstat.am/file/article/9.trud_2016_4.3.pdf

Աղյուսակ 1

Ոչ ֆորմալ զբաղվածության մակարդակն ըստ տնտեսական գործունեության տեսակների (%)[2]

	Ընդամենը		Տղամարդ		Կին	
	2014	2015	2014	2015	2014	2015
Ընդամենը	**49.9**	**47.7**	**49.6**	**47.7**	**50.3**	**47.6**
Գյուղատնտեսական (A)	99.3	99.0	98.7	98.3	99.9	99.6
Ոչ գյուղատնտեսական (B-U)	22.0	17.9	27.2	23.1	15.4	11.2
արդյունաբերություն	23.5	15.2	20.2	12.9	30.3	20.5
շինարարություն	61.7	65.6	63.8	67.7	18.5	14.6
ծառայություններ	17.4	13.9	21.9	18.0	13.1	9.9

Ինչպես վկայում են ՀՀ ազգային վիճակագրական ծառայության տվյալները (աղյուսակ 1), 2015 թ. ՀՀ-ում ընդհանուր զբաղվածների 47.7%-ն է ունեցել ոչ ֆորմալ զբաղվածություն՝ նախորդ տարվա համեմատությամբ նվազելով 2.2%-ային կետով (2014 թ.՝ 49.9%): Ընդ որում, ոչ ֆորմալ զբաղվածության մակարդակը զգալիորեն բարձր է գյուղատնտեսական հատվածում. 2015-ին վերջինս կազմել է 99.0%՝ ոչ գյուղատնտեսական հատվածի 17.9%-ի դիմաց: Գյուղատնտեսության ոլորտում ոչ ֆորմալ զբաղվածության նշյալ բարձր մակարդակը պայմանավորված է այն հանգամանքով, որ ոլորտում առկա են բազմաթիվ և բազմաբնույթ տնտեսավարող սուբյեկտներ (գյուղացիական տնտեսություններ), որոնց բացարձակ մեծամասնությունը չունի կազմակերպաիրավական որևէ կարգավիճակ: Ավելին, ոչ ֆորմալ զբաղվածության նման իրավիճակը բացատրվում է նաև գյուղատնտեսական արտադրանքի ապրանքայնության ցածր մակարդակով (վերջին 5 տարիների միջինացված ցուցանիշներով կազմում է ընդամենը 58.6%[3]), մասնագիտացման ցածր աստիճանով, ներդրումների և եկամուտների փոքր չափերով, տնտեսական ակտիվության ու գործունեության ներոլորտային փոփոխականության, սեզոնայնության բարձր աստիճանով և այլն:

Ոչ գյուղատնտեսական հատվածում առավելագույն թվով ոչ ֆորմալ զբաղվածներ, ինչպես կարելի էր ակնկալել, արձանագրվել են շինարարության ոլորտում: Ընդ որում, 2015 թ. այդ ցուցանիշն ունեցել է աճի միտում՝ կազմելով 65.6%՝ 2014 թ. 61.7%-ի դիմաց: 2015 թ. խնդրո առարկա ցուցանիշի ամենացածր մակարդակը գրանցվել է ծառայությունների ոլորտում՝ 13.9%՝ նախորդ տարվա համեմատությամբ նվազելով 3.5%-ային կետով: 2014 թ. համեմատությամբ, 8.3%-ային կետով նվազման միտում է արձանագրվել նաև արդյունաբերության բնագավառում՝ 2015 թ. կազմելով 15.2%:

Ոչ ֆորմալ զբաղվածության՝ ըստ սեռի ուսումնասիրությունները վկայում են, որ 2015-ին թե՛ կանանց և թե՛ տղամարդկանց զբաղվածության միջին հանրապետական ցուցանիշները գրեթե հավասար են: Այսպես՝ 2015 թ. տղամարդկանց ոչ ֆորմալ զբաղվածությունը կազմել է 47.7%՝ կանանց

---

[2] Տե՛ս Աշխատանքի շուկան Հայաստանի Հանրապետությունում, վիճակագրական ժողովածու, ՀՀ ԱՎԾ, 2016, էջ 83:

[3] Տե՛ս Գյուղատնտեսական արտադրանքի իրացումը (օգտագործումը) անհատական (գյուղացիական) տնային տնտեսությունների կողմից 2015 թվականին, վիճակագրական տեղեկագիր, Եր., 2016:

47.6%-ի դիմաց: Հայաստանում ինչպես տղամարդիկ, այնպես էլ կանայք, ոչ ֆորմալ զբաղվածության տեսանկյունից, առավելապես ներգրավված են գյուղատնտեսության ոլորտում՝ 2015 թ. կազմելով, համապատասխանաբար՝ 98.3 և 99.6%: Կանանց՝ ոչ գյուղատնտեսական ոլորտներում ներգրավվածության տեսանկյունից դիտարկելիս հանգում ենք այն եզրակացության, որ վերջիններիս ոչ ֆորմալ զբաղվածությունը, տղամարդկանց ցուցանիշի հետ համեմատած, զգալիորեն ցածր է շինարարության ոլորտում: Այսպես՝ տղամարդկանց ոչ ֆորմալ զբաղվածությունը շինարարության բնագավառում 2015 թ. կազմել է 67.7%՝ 2014 թ. 63.8%-ի դիմաց, այն դեպքում, երբ կանանց զբաղվածությունը կազմել է ընդամենը 14.6%՝ նախորդ տարվա 18.5%-ի դիմաց: Նման իրավիճակը բացատրվում է հիմնականում շինարարական աշխատանքների բնույթով և առանձնահատկություններով:

Ոչ ֆորմալ զբաղվածության մակարդակն անհրաժեշտ է դիտարկել նաև ըստ մարզերի, որի վերաբերյալ տվյալները ներկայացված են աղյուսակ 2-ում:

Աղյուսակ 2

Ոչ ֆորմալ զբաղվածության մակարդակն ըստ ՀՀ մարզերի և Երևան քաղաքի (%)[4]

	Ոչ ֆորմալ զբաղվածության մակարդակ					
	ընդամենը		*գյուղատնտեսական ոլորտ*		*ոչ գյուղատնտեսական ոլորտ*	
	2014	*2015*	*2014*	*2015*	*2014*	*2015*
Ընդամենը	**49.9**	**47.7**	**99.3**	**99.0**	**22.0**	**17.9**
ք. Երևան	17.6	16.2	77.4	65.6	17.1	16.1
Արագածոտն	61.4	59.7	97.3	97.8	34.7	32.0
Արարատ	61.5	63.4	99.7	99.3	25.6	20.9
Արմավիր	71.4	75.4	100.0	98.9	24.8	27.2
Գեղարքունիք	75.2	66.7	99.9	99.9	27.9	15.1
Լոռի	60.6	51.4	99.4	98.5	17.6	12.1
Կոտայք	47.8	44.9	98.1	96.1	34.6	24.8
Շիրակ	62.1	60.6	100.0	100.0	25.8	18.1
Սյունիք	40.8	36.2	99.1	99.6	7.6	4.0
Վայոց ձոր	56.1	54.5	98.2	99.8	16.8	12.5
Տավուշ	65.3	58.4	99.8	99.7	27.8	15.2

Ոչ ֆորմալ զբաղվածության ցուցանիշի՝ ըստ մարզերի դիտարկումները հնարավորություն են տալիս փաստելու, որ 2015-ին ամենացածր մակարդակը գրանցվել է մայրաքաղաքում՝ կազմելով ընդամենը 16.2%, ինչը միջին հանրապետականից ցածր է 31.5%-ային կետով: Միջին հանրապետականից ցածր են նաև ՀՀ Սյունիքի (36.2%) և Կոտայքի (44.9%) մարզերի ցուցանիշները: Երևանում և նշված մարզերում ոչ ֆորմալ զբաղվածության նման ցածր մակարդակը նախևառաջ բացատրվում է դրանցում տնտեսության ֆորմալ զբաղվածության և տնտեսական ակտիվության բարձր մակարդակով: Այսպես՝ 2015 թ. Երևանին բաժին է ընկել մանրածախ առևտրի և ծառայություն-

[4] Տե՛ս Աշխատանքի շուկան Հայաստանի Հանրապետությունում, նշվ. հրատ., էջ 82:

ների հանրապետության ամբողջ ծավալի համապատասխանաբար 76.4 և 81.4%-ը, արդյունաբերական արտադրանքի 41.2%-ը[5]: Ինչ վերաբերում է Սյունիքի և Կոտայքի մարզերին, ապա դրանց բաժին է ընկնում, օրինակ՝ արդյունաբերական ամբողջ արտադրանքի համապատասխանաբար՝ 13.3 և 10.3%-ը:

Նշվածին հակառակ՝ հանրապետությունում ոչ ֆորմալ զբաղվածության ամենաբարձր ցուցանիշներն արձանագրվել են Արմավիրի (75.4%), Գեղարքունիքի (66.7%), Արարատի (63.4%) և Շիրակի (60.6%) մարզերում: Ընդ որում, 2015-ին, նախորդ տարվա համեմատությամբ, ոչ ֆորմալ զբաղվածության աճ է արձանագրվել միայն Արմավիրի և Արարատի մարզերում. համապատասխանաբար՝ 4.0 և 1.9%-ային կետերով: Ոչ ֆորմալ զբաղվածության անկման ամենաբարձր տեմպերն արձանագրվել են Լոռու, Գեղարքունիքի և Տավուշի մարզերում. համապատասխանաբար՝ 9.2, 8.5 և 6.9%-ային կետերով:

Հետաքրքրաշարժ է նաև այն հանգամանքը, որ գյուղատնտեսական հատվածի ոչ ֆորմալ զբաղվածությունը 2015 թ. ամենաբարձրը եղել է Շիրակի մարզում՝ 100%, ամենացածրը՝ Երևանում՝ 65.6%: Միաժամանակ, ոչ գյուղատնտեսական հատվածի ամենաբարձր ցուցանիշը 2015 թ. արձանագրվել է Արագածոտնի մարզում՝ 32.0%, ինչը միջին հանրապետականից բարձր է 14.1%-ային կետով, իսկ ամենացածրը՝ Սյունիքի մարզում՝ ընդամենը 4.0%:

Ոչ ֆորմալ զբաղվածության աճը ցանկացած երկրի տնտեսության համար անցանկալի երևույթ է, որը պահանջում է մի շարք կանխարգելիչ միջոցառումների մշակում և իրագործում: Ընդ որում, երկրի տնտեսության ոչ ֆորմալ հատվածի վերացմանն ուղղված միջոցառումները, որոնցում անհրաժեշտ է ընդգրկել տնտեսական, իրավական և սոցիալական լծակներ, պետք է լինեն բազմաբնույթ, բայց միևնույն ժամանակ՝ համակարգային, ինչը պայմանավորված է դրա զարգացման և կայացման վրա ազդող բազմաբնույթ գործոններով: Այդ միջոցառումներից, թերևս, ամենակարևորը ոչ ֆորմալ տնտեսության օրինականացումն է, ինչը կնպաստի դրա ծավալների նվազեցմանը, իսկ լավագույն դեպքում՝ վերացմանը: Ոչ ֆորմալ զբաղվածության նվազեցմանն ուղղված այլ միջոցառումներից նշենք հարկային համակարգի բարեփոխումը, ինչը կնպաստի ոչ ֆորմալ հատվածից դեպի ֆորմալ հատված եկամտի հոսքին, կոռուպցիայի դեմ պայքարի միջոցների խստացումը և այլն: Ոչ ֆորմալ տնտեսության վերացմանն ուղղված մեկ այլ եղանակ է երկրում ֆինանսական հոսքերի նկատմամբ վերահսկողության ուժեղացումը:

Այսպիսով՝ ոչ ֆորմալ զբաղվածության հիմնախնդիրների լուծումը կարող է նպաստել աշխատողներին վերաբերող տնտեսական քաղաքականության վերանայմանը, իրավական դաշտի կատարելագործմանը, ոչ ֆորմալ զբաղվածների նկատմամբ այնպիսի կենսունակ մոտեցումների մշակմանը, որոնք ոչ ֆորմալ հատվածի միավորները ֆորմալ հատված ուղղելու հնարավորություն կստեղծեն:

[5] Տե՛ս Հայաստանի վիճակագրական տարեգիրք, ՀՀ ԱՎԾ, Եր., 2016, էջ 274, 353, 370:

Օգտագործված գրականություն

1. Աշխատանքի շուկան Հայաստանի Հանրապետությունում, վիճակագրական ժողովածու, ՀՀ ԱՎԾ, Եր., 2016.
2. Գյուղատնտեսական արտադրանքի իրացումը (օգտագործումը) անհատական (գյուղացիական) տնային տնտեսությունների կողմից 2015 թվականին, վիճակագրական տեղեկագիր, ՀՀ ԱՎԾ, Եր., 2016:
3. Աշխատուժը և ոչ ֆորմալ զբաղվածությունը Հայաստանում (զեկույց 2008 թ. ընտրանքային միանվագ հետազոտության արդյունքների վերաբերյալ), ՀՀ ԱՎԾ, Եր., 2009:
4. Ոչ ֆորմալ հատվածը և ոչ ֆորմալ զբաղվածությունը Հայաստանում, ազգային զեկույց, ՀՀ ԱՎԾ, Եր., 2010:
5. Հայաստանի սոցիալական պատկերը և աղքատությունը, վիճակագրական-վերլուծական զեկույց, ՀՀ ԱՎԾ, Եր., 2016:
6. Հայաստանի վիճակագրական տարեգիրք, ՀՀ ԱՎԾ, Եր., 2016:
7. Рофе А.И.,Экономика труда, учебник, “Кнорус”, 2010.
8. Measuring informality: A statistical manual on the informal sector and informal employment, International Labour Organization, 2013.
9. Kaufman Hotchkiss, The Economics of Labor Markets 6th Edition (Sixth Edition), Binding, 2003.
10. www.armstat.am
11. www.ilo.org
12. www.un.am

КРИСТИНА АНАНЯН
Аспирант кафедры Управления АГЭУ

Неформальная занятость в РА: тенденции и причины.– Анализ неформальной занятости одна из важнейших проблем любой страны, учитывая то обстоятельство, что неформальная занятость является основной характеристикой неучтенной экономики. Более того, неформально занятые, в отличие от формально занятых, всегда наиболее уязвимы, поскольку для них не доступны такие разные социальные гарантии, которые связаны с обеспечением здоровья и безопасными условями труда, получением социальных пособий, с защитой от непредусмотренных событий и т.д. Следовательно, любое научное заключение, которое касается неформальной занятости, может быть использовано для разработки такой политики в области занятости, которая обеспечит социально-экономическое развитие страны.

Ключевые слова: *занятость населения, неформальная занятость, уровень неформальной занятости, неучтенный сектор экономики.*
JEL: B22, J21, O17

KRISTINA ANANYAN
Post-graduate at the Chair of Management at ASUE

Informal Employment in the Republic of Armenia: Tendencies and Reasons.– Analysis of informal employment for every country is one of the most important problems taking into consideration the fact that informal employment is one of the main characteristics of non-observed economy. Furthermore, informal employees, unlike formal employees, are always more vulnerable, as different social guarantees, connected with health and provision of secure working conditions, receiving social benefits, being protected from unplanned events, etc., are not available for them. Consequently, any scientific conclusion concerning informal employment can be used for developing such a policy in the employment sphere that will promote the socio-economic development of the country.

Key words: *employment of population, informal employment, informal employment rate, non-observed economy.*
JEL: B22, J21, O17